Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները
1	2	3	4
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	20.	«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2017 թվականի ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016թ. դեկտեմբերի 23-ի N01/12.1/11137-16 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2017 թվականի ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313-Ն որոշման 13-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2017 թվականի ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի կողմից հաստատելու նպատակով համապատասխան հրամանի նախագիծն արդեն իսկ մշակվել է:
	21.	«Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016թ. դեկտեմբերի 21-ին N01/12.2/11065-16 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313-Ն որոշման 13-րդ կետի 5-րդ ենթակետը՝ Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի կողմից հաստատելու նպատակով համապատասխան հրամանի նախագիծն արդեն իսկ մշակվել է:
	22.	«Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2017 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016թ. դեկտեմբերի 16-ի N01/31.2/11136-16 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2017 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:
	23.	«Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2017 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2017 թվականի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և ստացված կարծիքների հիման վրա ներկայումս լրամշակվում է:
	24.	«Զբոսաշրջությանն աջակցության ծառայություններ» 2017 թվականի	«Զբոսաշրջության զարգացման 2017 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ տնտեսական

		ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	զարգացման և ներդրումների նախարարի 2017 թվականի հունվարի 11-ի N 01/15.1.1/146-17 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: ՀՀ կառավարության դիրքորոշումը ստանալուց հետո կապահովվի ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313-Ն որոշման 14-րդ կետի կատարումը:
	25.	«Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2016թ. դեկտեմբերի 3-ի 01/11.4/10312-16 գրությամբ ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2017 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախագիծը վերադարձվել է՝ ՀՀ ֆինանսների նախարարության հետ մեկ անգամ ևս քննարկելու նպատակով: Քննարկման արդյունքներով կապահովվի ՀՀ կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N1313-Ն որոշման 13-րդ կետի 4-րդ ենթակետի կատարումը:

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
1	2	3	4
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	16.	Տնտեսական աճի ապահովման ներքին հնարավորությունների ընդլայնում	• **Արտահանման վրա հիմնված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված ծրագրերի իրականացում** Իրականացվող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծման մաքսատուրքից ազատման արտոնություն է ստացել 10 ընկերության («Լիկվոր» ՓԲԸ, «ՎԿՍ Արմենիա» ՍՊԸ, «Սևան Ակվա» ՓԲԸ, «Վանաձորի «ԳԼՈՐԻԱ» կարի ֆաբրիկա» ՍՊԸ, «Գրանտ» ՍՊԸ, «Խաչատրյան Եղբայրներ» ՍՊԸ, «Ազադ Ֆարմասյութիքլզ» ՍՊԸ, «Շանթ» ՍՊԸ, «Նանման» ՍՊԸ, «Հիդրո Կորպորացիա» ՓԲԸ): Ներդրումային ծրագրերով նախատեսված է մոտ 42 մլն ԱՄՆ դոլարի ներդրում և մոտ 1500 նոր աշխատատեղի ստեղծում: Ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման նպատակով դեկտեմբերի դրությամբ ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել 11 ներդրումային ծրագիր, որի շրջանակներում ներմուծվող ապրանքների արժեքը կազմելու է 43.4 մլրդ. ՀՀ դրամ: Գործարարների քննարկմանն է ներկայացվել «Ադամանդագործության և ոսկերչության 2017-2020թթ. զարգացման» ծրագիրը: Ուսումնասիրվել են ադամանդագործության և ոսկերչության ոլորտը կարգավորող օրենսդրությունը պարզեցնելու և գործարարների ու հնարավոր ներդրողների համար վարչարարությունը մեկ պատուհան ակզբունքով իրականացնելու հնարավորությունները: Կազմակերպվել են մի շարք գործարար համաժողովներ և ցուցահանդեսներ, մասնավորապես՝ ✓ Սեպտեմբերի 20-ին՝ «Հայաստանը՝ որպես դարպաս դեպի մեծ շուկաներ» խորագրով համաժողովը, որին հրավիրվել և մասնակցել են շուրջ 250 անձ, այդ թվում պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			Հայաստանից, ԵԱՏՄ երկրներից, Իրանից և միջազգային կառույցներից: ✓ «Պատրաստված է Հայաստանում» ցուցահանդեսը, որտեղ շուրջ 300 արդյունաբերական ընկերություններ ներկայացրել են իրենց արտադրանքը: ✓ Հայաստանի ոսկերիչների ասոցիացիայի (AJA) հետ համատեղ հոկտեմբերի 24-28-ը ոսկերչության ոլորտում աշխարհում խոշորագույնը համարվող Համաշխարհային ոսկերչական կոնֆեդերացիայի (CIBJO) տարեկան համաժողովը և «JUNWEX Yerevan Show 2016» ցուցահանդեսը: Միջոցառումներին ներկա են գնվել մոտ 100 բարձրաստիճան հյուրեր և ներկայացուցիչներ 25 երկրներից ներկայացուցիչներ: ✓ METRO AG ընկերության մոսկովյան ներկայացուցչության ղեկավարի գլխավորած պատվիրակության այցը ՀՀ, որի շրջանակներում՝ տեղական արտադրանքի ցուցադրում Նախարարությունում: ✓ Դեկտեմբերի 21-ին «Հայաստան-Իրան» գործարար համաժողովը Երևանում, որի ընթացքում երկու երկրների ձեռներեցների միջև նոր գործարար կապեր հաստատելու նպատակով անցկացվել են B2B հանդիպումներ, որոնց մասնակցել են ավելի քան 170 գործարար: Ստորագրվել են համագործակցության 5 հուշագիր: Կազմակերպվել և/կամ ապահովվել է նաև հայկական շուրջ 500 ընկերությունների մասնակցությունը «Мосшуз», «World food Moscow 2016», «CPhI Worldwide», «Текстильлегпром 2016», «Արտադրված է Հայաստանում 2016», «Հայաստան էքսպո-Թեհրան», «ArmHiTec-2016», «Եվրասիական շաբաթ», «JUNWEX YEREVAN SHOW», ցուցահանդեսներին, որոնց արդյունքում արդեն իսկ առկա են շուրջ 45 պայմանագրեր և ձեռք բերված պայմանավորածաություններ. Նախապատրաստվել և ԵԱՏՄ շրջանակներում կազմակերպվել է «Антиконтрафакт-2016» միջազգային համաժողովը, որի ընթացքում ստորագրվել է «Համատեղ հայտարարություն արդյունաբերական ապրանքների ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին»: ԵԱՏՄ անդամ պետությունների միջև արդյունաբերական կոոպերացիայի զարգացման և խորացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները շարունակվում են: Փոխադարձ այցելություններ են կազմակերպվել և բանակցություններ են ընթանում ռուսական խոշոր ձեռնարկությունների՝ «Ռոստեխ» կորպորացիայի, «Միացյալ նավաշինական ընկերության» և հայկական ընկերությունների միջև համագործակցության ուղղությամբ: Ռուսական կողմին հետաքրքրել են հայկական մեքենաշինական և շինանյութերի ոլորտի որոշ արտադրատեսակներ: Ներկայումս ընթանում են քննարկումներ «Միացյալ նավաշինական ընկերության» և հայկական նշված ոլորտների ընկերությունների հետ արտադրատեսակների տնտեսական բնութագիրների և գների ճշգրտման ուղղությամբ: Դեկտեմբերի 23-ին տեղի ունեցավ «ԵԱՏՄ-Հայաստան՝ Արդյունաբերական համագործակցության հեռանկարները» խորագիրը կրող համաժողով, որի ընթացքում քննարկվեցին ԵԱՏՄ անդամ պետությունների միջև արդյունաբերական համագործակցության, Հայաստանի ինովացիոն կազմակերպությունների՝ ԵԱՏՄ տեխնոլոգիական պլատֆորմներին միանալու, Հայաստանում թվային տարածության ընդլայնման հնարավորությունները և Հայաստանի դերը ներմուծման փոխարինման մեջ: Համաժողովի ընթացքում ստորագրվեց Հայաստանի Առևտրաարդյունաբերական պալատի և ՌԴ Մոսկվայի մարզի Առևտրաարդյունաբերական պալատի միջև համագործակցության մասին համաձայնագիր: • **ՓՄՁ պետական աջակցության 2016 թվականի ծրագրի իրականացում** «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2016 թվականի ծրագիրը հաստատվել է ՀՀ

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			կառավարության կողմից 2016թ. ապրիլի 21-ի թիվ 403-Ն որոշմամբ: 2016 թվականի ընթացքում (դեկտեմբերի 15-ի դրությամբ) ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրի շրջանակներում Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվել է 8910 աջակցություն շուրջ 4300 սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների (4 %-ը՝ Երևան քաղաքում, իսկ 96 %-ը՝ ՀՀ մարզերում), մասնավորապես՝ ✓ 152 սկսնակ գործարարների տրամադրվել է ձեռներեցությանն աջակցություն, ✓ 126 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է ուսուցողական աջակցություն, ✓ 8417 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, ✓ 1 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է 14.9 մլն ՀՀ դրամի վարկային երաշխավորություն, ✓ 14 սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է վարկային երաշխավորություն: Ստացված վարկի ընդհանուր գումարը կազմել է 59.9 մլն ՀՀ դրամ, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի երաշխավորությունը՝ 61.6 մլն ՀՀ դրամ: Ծրագրի շրջանակներում սկսնակ գործարարներին տրամադրված երաշխավորության միջին գումարը կազմել է 4.3 մլն ՀՀ դրամ, վարկային միջոցների միջին գումարը՝ 4.4 մլն ՀՀ դրամ: Համայնքների տնտեսական ներուժի բացահայտման ուղղությամբ «Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատում» է իրականացվել 5 համայնքային խմբերում (կլաստեր), որտեղ ընդգրկվել են 19 համայնքներ: Ավարտին են հասցվել 10 ենթակառուցվածքային ծրագրեր: Բացահայտված են 82 տնտեսական նախաձեռնություններ: Ծրագրի շահառուների գործարար և տեխնոլոգիական կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են ոլորտային ուղղվածություն ունեցող դասընթացներ, որոնց մասնակցել է 67 հոգի: 10 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել են դրամաշնորհներ սարքավորումների/նյութերի ձևով: Մշակվել և տպագրվել են 1 տեխնոլոգիական և 2 գործարար ուղեցույցներ: Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցության և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովման նպատակով Հայաստանում ձեռնարկությունների եվրոպական ցանցի (ՁԵՑ) գործունեության շրջանակներում աջակցություն է տրամադրվել 190 ՓՄՁ սուբյեկտների, այդ թվում՝ 23 ՓՄՁ սուբյեկտների գործարար նկարագրեր տեղադրվել են ՁԵՑ-ում, 82-ը՝ ԵՄ արտահանման գործիքների վերաբերյալ կազմակերպված հանդիպումների մասնակիցներն են, 75 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել են տարբեր տեսակի աջակցություններ, այդ թվում՝ տեղադրվել են հարցումներ ՁԵՑ-ում, ուղարկվել են հետաքրքրության առաջարկներ և ստացված կոնտակտները ներկայացվել են տեղական ընկերություններին, ստացվել են հետաքրքրության առաջարկներ և ներկայացվել են նշված ընկերությունների տվյալները, մասնակցել են բիզնեսի միջազգայնացման տեղեկատվական միջոցառումներին, մասնակցել են «Շինարարություն և ինտերիեր», ինչպես նաև «Արտադրված է Հայաստանում 2016» և «Ռուսաստան-Հայաստան-Իրան 2016» ցուցահանդեսների շրջանակներում կազմակերպված գործարար հանդիպումներին, ստացել են անհատական խորհրդատվություն, ինչպես նաև 8 հայկական ընկերություններ համագործակցության համաձայնագրեր են կնքել Ձեռնարկությունների Եվրոպական Ցանցի անդամ երկրներում գործող ընկերությունների հետ: «Կանանց ձեռներեցությանն աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ Ասիական զարգացման բանկի տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացված «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի արդյունքներով մեկնարկել է «Գործարար կանանց ուղղորդում» ծրագիրը:

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			Կայացել է «Լավագույն կին գործարար» ՀՀ վարչապետի 2016 թվականի մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը, որի ընթացքում ՀՀ փոխվարչապետը պատվոգրեր է հանձնել «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության 6 անվանակարգերով հաղթած 12 կին-գործարարների: «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից 2016թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ տրամադրվել է թվով 35 վարկ, այդ թվում՝ վարկավորվել է թվով 26 իրավաբանական անձ և 8 անհատ ձեռնարկատեր: 2016 թվականի դեկտեմբերի 23-ի դրությամբ վարկավորման ծավալը կազմել է շուրջ 2 մլրդ ՀՀ դրամ, որը նպաստել է նոր արտադրության կազմակերպմանը և զարգացմանը, արտահանման խթանմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը կամ գործող աշխատատեղերի պահպանմանը ոչ միայն մոտակա, այլև երկրի հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում: ՓՄՁ ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրային ուղղությունների ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման նպատակով շարունակվել է համագործակցությունը մի շարք միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների հետ համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ, մասնավորապես, ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագիր, «Ձեռնարկատիրական աշխատանք Հայաստանի երիտասարդության համար» ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO)/Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի համատեղ ծրագիր, «Տեղական արտադրանքի զարգացում և տեղական ապրանքանիշերի առաջմղում» Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ/ՃՄՀԳ համատեղ ծրագիր, ԵՄ տարածքային զարգացման պիլոտային դրամաշնորհային ծրագիր (Pilot Regional Development Programme (PRDP) – Armenia), «ERASMUS երիտասարդ ձեռներեցների համար» ծրագիր: • **«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» 2016 թվականի ծրագրի իրականացում** ՀՀ կառավարության 2016թ. հունվարի 20-ի նիստում ընդունվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայությունների 2016 թվականի ծրագիրը և ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» N29-Ն որոշումը: «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի շրջանակում հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հավաստագրեր ստանալու համար դիմել են 105 ընկերություններ 421 նոր աշխատատեղեր ստեղծելու հնարավորությամբ, որոնցից հավաստագրվել են 102 ընկերություններ և ստեղծվել են 412 նոր աշխատատեղեր: Հաշվի առնելով օրենքի կիրարկման դրական արդյունքները և կարևորելով SS ոլորտի սկսնակ տնտեսավարող սուբյեկտներին պետության կողմից տրամադրվող աջակցության շարունակականությունը՝ մշակվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը հավանության է արժանացել 2016թ. դեկտեմբերի 15-ին կայացած ՀՀ կառավարության նիստում: Իրականացվել է SS ոլորտի վարչական ռեգիստրի վարումը, որի նպատակն է ապահովել SS ոլորտի վարչական վիճակագրական տեղեկությունների հավաքագրումը և դրանց հիման վրա ոլորտում վերլուծությունների ու կանխատեսումների իրականացումը: Ընկերություններից ստացված հաշվետվությունների հիման վրա պարբերաբար /յուրաքանչյուր ամիս/ ամփոփվել և ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանն են տրամադրվել ամփոփ վարչական վիճակագրական հաշվետվությունները:

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			Ապահովվել է Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնի, Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL), «IBM»-ի Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի ծրագրերի իրականացումը: 2016թ. նոյեմբերի 10-ին Երևանի պետական համալսարանում տեղի է ունեցել «IBM»-ի Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի պաշտոնական բացումը: Իրականացվել են 2019թ. Հայաստանում Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի անցկացման նախապատրաստական աշխատանքները, մասնավորապես, ապահովվել է համաժողովը 2019թ. ՀՀ-ում կազմակերպելու համար Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային այլանսին 2016թ. երաշխիքային կանխավճարի փոխանցման նպատակով Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից անհրաժեշտ ֆինանսավորման տրամադրումը: ՀՀ կառավարության 2016թ. մարտի 17-ի նիստում ընդունվել է «Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման 2016 թվականի ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 273-Ն որոշումը: 2016թ. հոկտեմբերին ՀՀ Նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի պաշտոնական բացումը: 2016թ. հունիսի 10-ին, ԱՄՆ Սիլիկոնյան հովտում, Սինոփսիս Մաունթին Վյու կամպուսում «ԱրմԹեք 2016» Հայաստանի բարձր տեխնոլոգիաների ոլորտի գլոբալ համաժողովի շրջանակում տեղի է ունեցել «Հայաստան SS ֆորումը»: Ֆորումի մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 100: Ֆորումն այս տարի առաջին անգամ անցկացվեց նոր ձևաչափով, մասնավորապես, ֆորումին մասնակցեցին նաև Համաշխարհային բանկի «Էլ. հասարակության և մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի շրջանակում իրականացվող «Հայաստան-ԱՄՆ SS ոլորտի աքսելերացիոն ծրագրի» հայաստանյան փուլն անցած SS ոլորտի նորաստեղծ և նոր լուծումներ առաջարկող 5 ընկերությունները /WiCastr, Onecryptor, Flaxton, Heltun, One Chat/, ինչը լավագույն հնարավորություն հանդիսացավ վերջիններիս համար՝ հնարավոր ներդրողներին, գործընկերներին, հաճախորդներին և աքսելերատորներին իրենց ծրագրերը ներկայացնելու համար: Ֆորումի շրջանակում հայկական պատվիրակությունն այցելեց «Սինոփսիս», «Ինթել», «Նվիդիա», «Ռեդդիթ» ընկերություններ, «ԱյԲիԷմ» հետազոտությունների ու մշակումների (R&D) կենտրոն: 2016թ. հունիսի 17-18-ը տեղի է ունեցել «Խելացի լուծումներ խելացի բիզնեսի համար» խորագիրը կրող 9-րդ ամենամյա «Դիջիթեք» բիզնես ֆորումը, որի նպատակն է աջակցել բիզնեսի տարբեր ոլորտներին գտնելու լավագույն տեխնոլոգիական լուծումները, ինչպես նաև տեխնոլոգիական ընկերություններին՝ հանդիպելու և ներկայանալու պոտենցիալ հաճախորդներին մեկ վայրում: Ֆորումի շրջանակում տեղի ունեցավ նաև «ԱՊՀ Քլինթեք (Մաքուր տեխնոլոգիաների և նորարարությունների վրա հիմնված սկսնակ բիզնեսներին աջակցություն) հարթակի ձևավորմանն ուղղված տարածաշրջանային հանդիպումը: 2016թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը ՀՀ վարչապետի բարձր հովանու ներքո տեղի է ունեցել 12-րդ ամենամյա «Դիջիթեք» տեխնոլոգիական ցուցահանդեսը, որի բացման արարողությանը ներկա էր նաև ՀՀ Նախագահը: Ցուցահանդեսին մասնակցել են տեղական ու արտասահմանյան (հնդկական, ամերիկյան, ռուսական, շվեդական, չինական) 124 ընկերություններ, 60000 այցելու: Ցուցահանդեսի շրջանակում անցկացվեցին նաև «Robofest» ռոբոտների

Պատասխանա-տու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			շքերթը, «Բաց խաղ» համակարգչային և բջջային խաղերի առաջնությունը, DigiLife սեմինարների շարքը և այլ միջոցառումներ: Բարձր որակավորմամբ տեխնոլոգիական մասնագետների պատրաստման և վերապատրաստման, աքսելերացիոն ծրագրերի իրագործման նպատակով իրականացվել են Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների ծրագրերը: 2016թ. հոկտեմբերին ՀՀ Նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի պաշտոնական բացումը: Նոյեմբերի 10-ին տեղի է ունեցել «IBM»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի պաշտոնական բացումը: Նոյեմբերի 18-19-ին Դիլիջանում «Հայաստան 20.18: 2018թ.՝ Հայաստանը ամենանորարար երկրների շարքում» խորագրի ներքո տեղի է ունեցել 4-րդ Բիզնես ինովացիոն ֆորումը, որին մասնակցեցին շուրջ 200 մասնակիցներ: Ֆորումին մասնակցում էին նաև Գերմանիայից, Իսրայելից, Թայվանից, Ռուսաստանից և Բուլղարիայից ժամանած խոսնակներ, որոնք ֆորումի մասնակիցներին ներկայացրեցին ինովացիոն ոլորտում իրենց երկրների հաջողված փորձը: Դեկտեմբերի 11-ին տեղի է ունեցել վենչուրային համաժողով, որի ընթացքում ներկայացվել են «Գիտության և տեխնոլոգիաների ձեռներեցության ծրագրի (STEP) շրջանակում հայտարարված «Գաղափարից դեպի շուկա» դրամաշնորհային մրցույթին ստացված տեղեկատվական, բարձր և մաքուր տեխնոլոգիաների, ճարտարագիտության, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտների ավելի քան 70 ծրագրերից ընտրված 20 ծրագրերը: Հաղթող ճանաչված 5 ծրագրեր արժանացել են դրամական մրցանակների: Հիմք ընդունելով «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի կիրարկման դրական արդյունքները և կարևորելով SS ոլորտի սկսնակ տնտեսավարող սուբյեկտներին պետության կողմից տրամադրվող աջակցության շարունակականությունը՝ մշակվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը հավանության է արժանացել դեկտեմբերի 15-ին կայացած ՀՀ կառավարության նիստում: Իրականացվել են 2019թ. Հայաստանում Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային համաժողովի անցկացման նախապատրաստական աշխատանքները: Ապահովվել է համաժողովը 2019թ. ՀՀ-ում կազմակերպելու համար Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային ալյանսին 2016թ. երաշխիքային կանխավճարի փոխանցման նպատակով Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից անհրաժեշտ ֆինանսավորման տրամադրումը: Համաշխարհային բանկի «Էլ.-հասարակության և մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի շրջանակում՝ ✓ Նորարարության զարգացման համաֆինանսավորվող դրամաշնորհների և Գյումրու ու Վանաձորի համաֆինանսավորվող դրամաշնորհների մրցույթների արդյունքում հաղթող ճանաչված թիմերի կողմից Երևանում, Գյումրիում և Վանաձորում գրանցվել են ավելի քան 20 սկսնակ ընկերություններ, ստեղծվել են 150-ից ավելի նոր աշխատատեղեր: 2016թ. Երևանում, Գյումրիում և Վանաձորում շարունակվել է նշված

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			ընկերությունների գործունեությունը: ✓ ՀՀ հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային և լեռնային համայնքներում ինտերնետ հասանելիության մակարդակի բարձրացման ուղղությամբ Համաշխարհային բանկի վարկային ծրագրի շրջանակում իրականացվել է ՀՀ գյուղերում անլար ինտերնետ սարքերի մատակարարման և տեղադրման ծրագիրը, որի շրջանակում ՀՀ շուրջ 344 հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում տեղադրվել են ինտերնետ հասանելիության անլար (Wi-Fi երթուղիչ) սարքեր: 2016թ. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի ու «Յուքոմ» ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակում ծրագրում ներառված և ընկերության 3G ծածկույթում գտնվող գյուղական համայնքներում «Յուքոմ»-ի կողմից հովանավորչական հիմունքներով ապահովվել է անլար երթուղիչ սարքերի միջոցով անհատույց ինտերնետի տրամադրումը: Իրականացվել են «Գրանատուս» վենչուրային ֆոնդի ծրագրի դիտարկման աշխատանքները: Ֆոնդի կառավարչի կողմից պայմանագրեր են ստորագրվել, ընդհանուր առմամբ, 8 ընկերությունների հետ: 2016թ. ՀՀ կառավարությունում Նախարարության և «SAP» ընկերության միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որի շրջանակում նախատեսվում է համագործակցություն ընկերության հետ համատեղ ներդրումային ծրագրերի իրականացման (այդ թվում՝ ՀՀ-ում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված), ընկերության կողմից հայաստանյան բուհերում վերապատրաստումների կազմակերպման, Հայաստանում «SAP» ընկերության Հետազոտությունների և մշակումների (R&D) կենտրոնի ստեղծման ուղղությամբ՝ «ամպային» տեխնոլոգիաների ոլորտում ընկերության փորձի և գիտելիքների փոխանցումը, սկսնակներին աջակցությունը, հետազոտությունների և մշակումների իրականացումը, գլոբալ մրցակցային արտադրանքի և ծառայությունների խթանումն ապահովելու նպատակով: 2016թ. Հայաստանում նշանակվել է նաև «SAP» ընկերության մշտական ներկայացուցիչը: 2016թ. անցկացվել է SS ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի ամենամյա մրցանակաբաշխությունը: SS ոլորտում համաշխարհային ներդրման համար ՀՀ Նախագահի 2016 թվականի մրցանակին արժանացել է ֆրանսիացի աշխարհահռչակ գիտնական, համացանցի նախահայրերից մեկը համարվող, «Օփեն-Ռութ» կազմակերպության գլխավոր տնօրեն Լուի Պուզենը: Ակտիվ մասնակցություն է ապահովվել նաև Եվրասիական տնտեսական միության և Եվրամիության շրջանակներում թվային տնտեսությունների ինտեգրմանն ուղղված աշխատանքներին: **Վիճակագրություն և արդյունքներ** ✓ 2016թ. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կանխատեսվող հիմնական ցուցանիշներն են՝ – ընդհանուր շրջանառությունը՝ ավելի քան 500 մլն դոլար, – ընկերությունների թիվը՝ 540, նախորդ տարվա համեմատ աճը՝ 20%, – ընկերություններում ներգրավված աշխատակիցների թիվը՝ 16000 մասնագետ, նախորդ տարվա համեմատ աճը՝ 6.6%, – ոլորտի աճը՝ 20%:

Պատասխանա-տու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			✓ SS ոլորտի վարչական վիճակագրական ռեգիստրի տեղեկատվական համակարգում՝ 2016թ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում՝ – գրանցվել և հաշվետվություններ են ներկայացրել 525 ընկերություններ և անհատ ձեռնարկատերեր /բացառապես SS ծառայությունների մասով/, – ոլորտի շրջանառության ծավալը կազմել է 53.4 մլրդ ՀՀ դրամ, – արտահանումը կազմել է 37.1 մլրդ ՀՀ դրամ, – ներմուծումը կազմել է 386.7 մլն ՀՀ դրամ, – աշխատողների թիվը՝ 6518: ✓ Բարձր որակավորմամբ տեխնոլոգիական մասնագետների պատրաստման և վերապատրաստման, աքսելերացիոն ծրագրերի իրագործման նպատակով՝ **Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում՝** – մասնագիտական կարողությունների զարգացման բաղադրիչի շահառուների ընդհանուր թիվը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 3821, – բիզնես խորհրդատվություն և աջակցություն է տրամադրվել 60 սկսնակ թիմերի, ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի, – կենտրոնում գործում են 21 ընկերություններ՝ 150 աշխատատեղով, – կենտրոնի առկա կիրառելի տարածքի զբաղվածությունը կազմում է 99%, – առկա պայմանավորվածությունների շրջանակում կենտրոնում նախատեսվում է ևս 2 նոր ընկերությունների ներգրավում: **Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում՝** – մասնագիտական կարողությունների զարգացման բաղադրիչի շահառուների ընդհանուր թիվը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 4380, – բիզնես խորհրդատվություն և աջակցություն է տրամադրվել 68 սկսնակ թիմերի, ընկերությունների և անհատ ձեռնարկատերերի: **«Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնում** կազմակերպվել են 53 երկարաժամկետ դասընթացներ, որոնց մասնակցել են 739 մասնակիցներ: **Հայ-հնդկական ՏՀՏ ուսումնական կենտրոնի** բնականոն գործունեության ապահովում» միջոցառման **շրջանակում** կազմակերպվել են 84 կարճաժամկետ և երկարաժամկետ դասընթացներ ու սեմինարներ, մասնակիցների ընդհանուր թիվը՝ 1180: «Նեյշնլ Ինսթրումենթս» ընկերության հետ համատեղ իրականացվող **Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիայի (ANEL) ծրագրի** շրջանակում 1700 ուսանողներ մասնակցել են «ANEL»-ի կողմից կազմակերպված դասընթացներին:

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			«IBM»-ի նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի ծրագրի շրջանակում կազմակերպվել են 100 դասընթացներ և սեմինարներ, որոնց մասնակցել են 1500 մասնակիցներ: Կենտրոնի կողմից նաև բիզնես խորհրդատվություն է տրամադրվել 30 սկսնակ թիմերի: • **ՀԲ-ի «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» վարկային ծրագրի մեկնարկ** 2016 թվականի փետրվարի 3-ին ընդունվել է «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» վարկային ծրագրի նախապատրաստման դրամաշնորհով նախատեսված միջոցառումների իրականացման գործընթացի կառավարման խորհուրդ ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի N 43-Ա որոշումը: Ծրագրի նախապատրաստման դրամաշնորհով նախատեսված միջոցառումների շրջանակներում իրականացվել են նախագծային աշխատանքներ, աշխատանքային խմբի արտագնա տեղում ուսումնասիրություններ, քննարկումներ և նախագծային աշխատանքների լրամշակումներ: ՀՀ Սահմանադրական դատարանը քննության առնելով «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը 2016 թվականի հունիսի 21-ի թիվ ՍԴՈ-1283 որոշմամբ հաստատվել է համաձայնագրում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՀ ազգային ժողովի կողմից հաստատվել է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2016 թվականի փետրվարի 23-ին ստորագրված՝ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր» վարկային համաձայնագիրը (Ազգային Ժողով՝ Ն-1029-24.06.2016-ԱՀ,ՖՎ-011/0): 2016 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունվել է «Համաշխարհային Բանկի վարկային ֆինանսավորմամբ իրականացվող «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի կառավարման կոմիտե և աշխատանքային խումբ ստեղծելու մասին» ՀՀ վարչապետի N 1257 որոշումը:
	17.	Հայաստանի ներդրումային հեղինակության բարելավում	• **Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2016 թվականի ծրագրի իրագործում** Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի կողմից 2016 թվականի հոկտեմբերի 25-ին հրապարակած՝ «Գործարարությամբ զբաղվելը 2017-Հավասար հնարավորություն բոլորի համար» վարկանիշային զեկույցի տվյալներով, որը կազմվում է գործարարների և պետական մարմինների կողմից լրացրած հարցաթերթիկների ամփոփման հիման վրա՝ Հայաստանը 190 երկրների շարքում նախորդ տարվա վերագնահատված արդյունքների (43-րդ տեղ) համեմատությամբ բարելավել է իր դիրքը 5 կետով՝ բարձրանալով 38-րդ տեղը: ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 11-ի թիվ 110-Ա որոշմամբ հաստատված՝ Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2016 թվականի ծրագրում ներառված են 39 միջոցառումներ, որոնցից 7-ը (1.4, 3.3, 3.4, 4.2, 4.3, 4.4, 4.5) պահանջում են լրացուցիչ ֆինանսավորում: Նշված 7-ից 2-ը (4.3, 4.5) գտնվում են իրականացման փուլում: Ծրագրում ներառված 39 միջոցառումներից 22-ը (1.1, 1.3, 1.5, 1.6, 1.7, 1.8, 2.3, 2.4, 4.1, 4.2, 4.4, 4.7, 5.2, 6.1, 6.2, 6.5, 8.1, 9.1, 9.2, 9.3, 9.4, 10.1) ամբողջությամբ կատարված են, 8-ը՝ կրում են շարունակական բնույթ (1.2, 2.1, 3.2, 4.6, 5.1, 5.3, 6.6, 7.1): Իրականացման փուլում են գտնվում լրացուցիչ ֆինանսավորում չպահանջող միջոցառումներից ևս 2-ը (2.2,

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			3.1) : Ծրագրում առկա 5 միջացառում (1.4, 3.3, 3.4, 6.3, 6.4) նախատեսվում է ներառել 2017 թվականի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրում: • **Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հայեցակարգի և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցի իրականացում** «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: Հիմնական նորույթները վերաբերում են ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրմանը, օտարերկրյա ներդրողների համար երաշխիքների հստակեցմանը, վեճերի լուծման դրույթներին: «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» օրենքի հայեցակարգը և օրենքի նախագիծը ներկայումս քննարկվում են շահագրգիռ կողմերի հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել միջազգային կազմակերպությունների հետ (ՎԶԵԲ, ԵՄ, ԱԶԲ, ՄՖԿ) հայեցակարգի մշակելու աջակցության վերաբերյալ, որը կարող է հիմք հանդիսանալ ներդրումային գաղափարներին պետության առավել արդյունավետ օժանդակության մեխանիզմներով ապահովելու հարցում: Մշակվել է համատեղ աշխատանքների ժամանակացույց: Հայեցակարգը կներկայացվի մինչև 2017թ. ապրիլ ամիս, իսկ օրենսդրական փաթեթը պատրաստ կլինի մինչև 2017թ. նոյեմբեր ամիսը: • **Միջազգային ներդրումային ֆորումի անցկացման համար անհրաժեշտ գործընթացների ապահովում** Հոկտեմբերի 10-11-ը ԱՄՆ Նյու Յորքում կայացել է Հայաստան ներդրումային համաժողով 2016-ը, որին բացման ելույթով հանդես է եկել ՀՀ նախագահը: Ներկայացվել է գործարարությամբ զբաղվելու, տնտեսության 8 ոլորտների վերաբերյալ շնորհանդեսներ, 7 ներդրումային ծրագրեր, Հայաստանում գործող միջազգային ֆինանսական կառույցների կողմից առաջարկվող ներդրումային գործիքներ: Գրանցվել է 200-ից ավելի մասնակից: • **Ազգային ինովացիոն համակարգի բաղադրիչների զարգացում** Միասնական ինովացիոն հարթակի գործարար մոդելի առաջարկի շրջանակում աշխատանքներ են տարվում տեխնոլոգիական ոլորտներում աշխատող մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ՝ պետություն-մասնավոր համագործակցության ձևաչափով հարթակի ստեղծման, շահագործման և զարգացման փուլերի աշխատանքներում ներգրավելու համար: Շարունակվել է համագործակցությունը «ԱՊՀ մասնակից պետությունների ինովացիոն ոլորտում մինչև 2020 թվականը համագործակցության միջպետական ծրագրի» իրականացման ուղղությամբ՝ մասնավորապես, ուսումնասիրվել և առաջարկություններ են ներկայացվել Ծրագրի շրջանակում մշակված մի շարք փաստաթղթերի արդիականացման վերաբերյալ: Տեղեկատվական-վերլուծական նյութ է տրամադրվել ծրագրի համակարգող ՌԴ Ռոսստրուդնիչեստվո գործակալությանը Հայաստանի ինովացիոն ոլորտի 2015-2016թթ. զարգացման վերաբերյալ: Հոկտեմբերի 24-ին Երևանում Գիտության և մշակույթի ռուսաստանյան կենտրոնում խորհրդակցություն է անցկացվել Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոնում Ծրագրի իրականացման շրջանակում փորձագետների պրոֆիլային խմբեր ձևավորելու և այդ նպատակով սեմինարների շարք կազմակերպելու համար: Սեմինարներն անցկացվում են Ծրագրին

Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			մասնակից ԱՊՀ պետությունների տարածքում՝ ՌԴ Ռոսսոտրուդնիչեստվո գործակալության աջակցությամբ: Մայիսից մեկնարկել է «Երիտասարդ նորարարի դպրոց» երկարաժամկետ ծրագիրը, որի շրջանակում կազմակերպվել է «Նորարարությունների կառավարում» կրթական ծրագիրը, որում ընդգրկվել են մասնակիցներ գիտահետազոտական, արտադրական կազմակերպություններից, բուհերի ուսանողներ և դասախոսներ, անհատ նորարարներ և ձեռնարկատերեր: Սեպտեմբերի 27-29 կայացել է «Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության» (WIPO) կողմից կազմակերպված «Տեխնոլոգիաների և ինովացիաների աջակցման կենտրոնների» (TISC) սեմենարին, որի նպատակն էր ծանոթացնել WIPO-ի կողմից ստեղծված տեխնոլոգիաների և նորարարությունների աջակցման կենտրոնների ցանցին և աջակցել նմանատիպ կենտրոնների ստեղծմանը Հայաստանում: Աշխատաժողովի շրջանակում քննարկվել են ՀՀ-ում տեխնոլոգիաների և նորարարությունների աջակցման կենտրոնների ստեղծման և վերջիններիս գործունեությունը համակարգելու նպատակով ՆՁԱԿ-ին կոնտակտային կենտրոնի կարգավիճակ տալու հարցը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկելու և մշակելու գործողությունների ճանապարհային քարտեզը: Սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 2-ը ք. Ծաղկաձորում կազմակերպվել է «Նորարարությունների կառավարում» II միջազգային երիտասարդական գիտական դպրոցը, որին մասնակցել են Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից, Ուկրաինայից, Խորվաթիայից, Բելառուսից, Վրաստանից, Իրանից և այլ երկրներից ժամանած 20-35 տարեկան 48 երիտասարդ գիտնականներ, ուսանողներ, ասպիրանտներ, և նորարարներ: Դպրոցի շրջանակում կազմակերպվել են սեմինարներ, դասախոսություններ, վարպետության դասեր ինովացիոն մենեջմենթի և նախագծերի կառավարման ոլորտի առաջատար հայ մասնագետների կողմից; Դասախոսությամբ և վարպետության դասով հանդես է եկել նաև «Commercialization Reactor» տեխնոլոգիական հարթակի հիմնադիր, մի շարք ստարտափների ստեղծող և ֆինանսավորող, գործարար և գիտական շրջանակներում որպես «բիզնես հրեշտակ» ճանաչված Նիկոլայ Ադամովիչը՝ հրավիրված Լատվիայի Հանրապետությունից: Նոյեմբերի 28-ին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում տեղի է ունեցել հանդիպում Իրանի նանոտեխնոլոգիական նախաձեռնությունների խորհրդի (Iran Nanotechnology Initiative Council) ներկայացուցիչների հետ, որի ժամանակ քննարկվել են ինովացիոն քաղաքականության մշակման և իրականացման ՀՀ և ԻԻՀ փորձը և ոլորտին վերաբերող այլ հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցության հուշագիր ստորագրելու վերաբերյալ, ինչպես նաև հրավեր է ստացվել իրանական կողմից նախարարության ներկայացուցիչների ճանաչողական այցի վերաբերյալ, որի ժամանակ ակնկալվում է ուսումնասիրել նանոտեխնոլոգիաների ոլորտի կազմակերպությունների փորձը, իրականացվող ծրագրերը և ինովացիոն ենթակառուցվածքները: Նախարարության և ԻԻՀ Նանոտեխնոլոգիաների նախաձեռնող խորհրդի միջև ստորագրվելիք գիտական և տեխնոլոգիական համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի նախագիծը իրանական կողմից դեկտեմբերին պաշտոնապես փոխանցվել է հայկական կողմին: ՆՁԱԿ-ում կազմակերպվել է հանդիպում Հնդկաստանի գիտության և տեխնոլոգիաների նախարարության միջազգային համագործակցության հարցերով խորհրդական Ս. Կ. Վարշնիի հետ, քննարկվել են ՆՁԱԿ-ի և Հնդկաստանի ազգային ինովացիոն հիմնադրամի հետ համագործակցության ուղղությունները և հնարավորությունները: Հիմնադրամի հետ բանակցությունները շարունակվում են: Շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) հետ. նոյեմբերի 2 –

Պատասխանա-տու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի կատարմանն ուղղված քայլերը
			4-ը Նախարարության մասնագետները հանձնաժողովի հրավերով մասնակցել են "Start-Up Nations - Innovative Entrepreneurship for Sustainable Development" միջազգային կոնֆերանսին, ինչպես նաև հանձնաժողովի փորձագետների խմբի՝ ինովացիոն և մրցունակության քաղաքականության հարցերին նվիրված 9-րդ նիստին: Դեկտեմբերի 7-10-ը տեղի է ունեցել ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի փորձագետների այցը Երևան: Կազմակերպվել է աշխատաժողով 2014թ.-ին Հայաստանի ինովացիոն համակարգի վերաբերյալ նրանց կողմից մշակված Զեկույցի երաշխավորությունների ներքո ինովացիոն ոլորտում հետագա զարգացումների ներկայացման և վերլուծության նպատակով: Դեկտեմբերի 12-ին Եվրամիության արևելյան գործընկերության երկրների գիտության, տեխնոլոգիաների և ինովացիոն ոլորտում համագործակցության շրջանակային ծրագրի կողմից ֆինանսավորում ստացած «Գիտության, տեխնոլոգիաների և ինովացիոն (ԳՏԻ) ոլորտում միջազգային համագործակցության ցանցի ստեղծում արևելյան գործընկերության երկրների համար» (STI International Cooperation Network for Eastern Partnership Countries) նախագծի շրջանակում մշակված՝ Հայաստանի ԳՏԻ համակարգի քաղաքականության հարցերին նվիրված զեկույցի ներկայացման նպատակով Երևանում կազմակերպվել է աշխատաժողով (IncoNet EaP Project Policy Mix Review of the Armenian Science-Technology-Innovation System: Follow-up Workshop) նախագծի միջազգային փորձագետների թիմի մասնակցությամբ: Ներկայացվել է Հայաստանում ինովացիոն ոլորտի աջակցության քաղաքականությունը: